# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1947 թվականին, սովետական մի խումբ գիտնականների նախաձեռնությամբ, հիմնվեց Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերությունը։ Անցած տարիների ընթացքում մի քանի հարյուր անդամից Ընկերությունն աճել և դարձել է սովետական մտավորականության մասսայական կազմակերպություն։ Այժմ Ընկերությունն իր շարքերում ընդգրկում է գիտության, արվեստի, կուլտուրայի աշխատողների, արդյունաբերության և գյուղատնտեսության նորարարների ավելի քան 700 հազար անդամ։

Այդ տարիներին Ընկերության շարքերն աճել են նաև Հայաստանում։ Այժմ Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը, որի նախագահը 1947 թ. սկսած հանդիսանում է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, իր շարքերում ունի մոտ 5000 անդամ, որոնցից ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ են 36 հոգի, դոկտոր-պրոֆեսորներ՝ 76, գիտության թեկնածուներ՝ 448, բժիշկներ՝ 244, ուսուցիչներ՝ 960, ինժեներներ՝ 145, գյուղատնտեսության մասնագետներ՝ 476։

Պետք է նշել, որ այդ մեծ բանակը, ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ մեզ մոտ՝ Հայաստանում, սիրով է ծառայում իր ժողովրդին, ակտիվորեն օգնում է արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողներին՝ պարտիայի ու կառավարության նախագծած հոյակապ խնդիրների իրականացման գործում, զգալի աշխատանք է կատարում աշխատավորությանը գիտության, տեխնիկայի, կուլտուրայի նորագույն նվաճումներին հաղորդակից դարձնելու, նրանց մեր մեծ Հայրենիքի նկատմամբ սիրո և հպարտության ոգով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ։ Այդ նրանք են, որ սիստեմատիկաբար ժողովրդին են հասցնում պարտիայի ճշմարիտ խոսքը, պրոպագանդում Սովետական Միության լենինյան արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, մերկացնում իմպերիալիստների մեքենայությունները և ոտնձգությունները խաղաղության դեմ։

Գիտության բոլոր ճյուղերի պրոպագանդան սիստեմատիկ և կազմակերպված ձևով տանելու համար, ռեսպուբլիկայի անվանի գիտնականների նախագահությամբ Ընկերության վարչությանն առընթեր ստեղծված են ՍՄԿՊ պատմության, ՍՍՌՄ ժողովուրդների և ընդհանուր պատմության, Գյուղատնտեսության, Աշխարհագրաբանական, Արդյունաբերության Էկոնոմիկայի, Բժշկական, Բիոլոգիայի, Գիտա-աթեիստական, Գիտա-տեխնիկական, Գյուղատնտեսության Էկոնոմիկայի, Գրականության և արվեստի, Մանկավարժության, Միջազգային հարաբերությունների, Պետության և իրավունքի, Ռազմական գիտելիքների, Փիլիսոփայության, Քաղաքատնտեսության, Ֆիզիկա-մաթեմատիկայի և քիմիայի, Ֆիզկուլտուրայի և սպորտի սեկցիաներ։ Սրանց ղեկավարությամբ աշխատում են քաղաքային և շրջանային բաժանմունքներին առընթեր համապատասխան սեկցիաները։

Չկա գիտության, արվեստի, գրականության, տեխնիկայի, ժողովրդական տնտեսության որևէ ընդավառ, որի շուրջը դասախոսություններ չկազմակերպվեն։ Եթե Ընկերության կազմակերպման առաջին տարիներին Հայաստանում կարդացվում էր ընդամենը մի քանի հարյուր դասախոսություն, ապա 1956 թ. դրանց թիվը հասավ 18,806-ի, 1957 թվականին՝ 27,663-ի, իսկ 1958 թվականին գործարաններում, ֆաբրիկաներում, սովխոզներում, կոլտնտեսություններում, դպրոցներում և այլ կազմակերպություններում կարդացվել է ավելի քան 30 հազար դասախոսություն։

Ուշագրավ է այն փաստը, որ դասախոսությունների թվի ավելացմանը զուգընթաց անհամեմատ բարձրացել է նաև նրանց գաղափարական ու գիտական մակարդակը։ Հատկանշական է և այն, որ դասախոսությունների կեսից ավելին Ընկերության անդամների կողմից կարդացվում է անվճար։ Ներկայումս, երբ սովետական ամբողջ ժողովուրդը ոտքի է ելել ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի հոյակապ խնդիրները կյանքում կենսագործելու համար, Ընկերության կողմից տարվող աշխատանքների կենտրոնական հարցերից մեկն է դարձել ՍՄԿՊ XXI համագումարի որոշումների ու նյութերի պրոպագանդումը աշխատավորության լայն մասսաների մեջ։ 1959 թվականի անցած ամիսների ընթացքում ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններում, սովխոզներում, կոլտնտեսություններում կարդացվել է մոտ 5 հազար դասախոսություն նվիրված ՍՄԿՊ XXI համագումարի կողմից առաջ քաշված ինչպես տեսական հարցերի, այն-

պես էլ յոթնամյա պլանով նախատեսված խնդիրների պրոպագանդմանը։

Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը իր աշխատանքներում մեծ տեղ է հատկացնում հայ գրականության, արվեստի, երաժշտության, հայ ժողովրդի պատմության պրոպագանդմանը։ Մայրաքաղաքի լավագույն ուժերը սիստեմատիկաբար դասախոսություններով հանդես են գալիս ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի շրջաններում։

Միայն 1959 թվականի 7 ամիսներին վերոհիշյալ թեմաներով Երևանում և ռեսպուբլիկայի շրջաններում աշխատավորության համար կազմակերպվել է ավելի քան 1890 դասախոսություն։

Պատմության, լեզվի, գրականության ու արվեստի տարբեր հարցերի շուրջը հաճախակի ելույթներ են ունեցել պրոֆեսորներ Գ. Ղափանցյանը, Արարատ Ղաբիբյանը, Ս. Երեմյանը, Գուրգեն Սեակը, Մ. Ադայանը, Լ. Խաչիկյանը, Կ. Ղաֆադարյանը, Ա. Հակոբյանը, Գևորգ Ակրովը, արվեստագետներ Ռուբեն Զարյանը, Սամսոն Գասպարյանը, Խորեն Թոքչյանը, Ֆարդարիտա Հարությունյանը և ուրիշներ։ Առանձնապես մեծ տեղ է տրվում աշխատավորների հանդիպումներին արվեստի, գրականության, երաժշտության ականավոր ներկայացուցիչների հետ։ Նման հանդիպումներ էր ունենում աշխատավորության հետ նաև մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը։ Այդպիսի հանդիպումներ են կազմակերպվել Երևան քաղաքի բոլոր կուլտուրայի տներում, Ուսուցչի տանը, Երևանի Կիրովի անվան, Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, ժամացույցների, Քանաքեռի Ալյումինի, ֆրեզերային հատուցաշինական, Շահումյանի շրջանի Մեսրոպի, Մյասնիկյանի անվան գործարաններում, ֆաբրիկաներում, և կոմբինատներում, ինչպես նաև Ազիզբեկովում, Աշտարակում, Արտաշատում, Էջմիածնում, Գալինում և այլ շրջաններում։

Ինչպես Երևանում, այնպես էլ ռեսպուբլիկայի շրջաններում աշխատավորության հետ հաճախակի հանդիպումներ են ունեցել ՍՍՌՄ ժողովրդական արտիստներ Հրաչյա Ներսիսյանը, Վահրամ Փափազյանը, հանգուցյալ Վազգեն Վազգենյանը, սիրված արտիստներ Գևորգ Աշուգյանը, Թաթուլ Դիլաբյանը, Ժան Էլոյանը, Մեսրոպ Սիմոնյանը և ուրիշներ, ամանների վարպետներ Հայկուհի Գարագաշը, Թամարա Դեմուրյանը, երգչուհիներ Օֆելյա Համբարձումյանը, Լուսիկ Զոհրաբը, Արմինե Թութունջյանը, գրողներ՝ Նաիրի Զարյանը, Գուրգեն Բորյանը, Դարեգին Սևունցը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Սերո Խանզադյանը, Համո Սահյանը և ուրիշներ։

Հետզհետե ավելի բազմազան են դառնում ընկերության կողմից տարվող պրոպագանդայի ձևերն ու մեթոդները։

Ինչպես Միության մեջ, այնպես էլ մեզ մոտ՝ Հայաստանում, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության աշխատանքներում տեղ են գտել պրոպագանդայի այնպիսի նոր ձևեր, ինչպիսիք են հարց ու պատասխանի երեկոները, գիտա-արտադրական կոնֆերանսները, ցիկլային դասախոսությունները, բանավոր ամսագրերը, հին բոլշևիկների, գիտության, արվեստի աշխատողների հանդիպումները աշխատավորների ու երիտասարդության հետ և այլն։

Գյուղական աշխատավորության առջև սիստեմատիկաբար հանդես են գալիս մայրաքաղաքից ռեսպուբլիկայի շրջանները գործուղված բազմաթիվ գիտնականներ։ Միայն 1959 թվականի անցած յոթ ամիսներին շրջաններն են մեկնել ավելի քան 700 դասախոսներ, այդ թվում ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանը, Ս. Մերգելյանը, Ս. Կարապետյանը, Գ. Ադաջանյանը, Ա. Բարայանը, Հ. Փանոսյանը, դոկտոր պրոֆեսորներ Հ. Բաղիկյանը, Ա. Հարությունյանը, Ա. Ջաղարյանը, Ա. Մեհրաբյանը և շատ ուրիշներ։

Բնորոշ է, որ շրջանները մեկնող անվանի գիտնականները հանդես են գալիս ոչ միայն զրպես սոսկ դասախոսներ, այլև տեղում ծանոթանալով ավյալ հիմնարկի կամ տնտեսության ոլորտների վիճակին, իրենց խորհուրդներով ու տեսական մասնակցությամբ կոնկրետ օգնություն են ցույց տալիս եղած թերությունները վերացնելու գործում։ Այսպես, օրինակ, ընկերության անդամներ՝ դոկտոր-պրոֆեսոր Պ. Հովհաննիսյանը, գիտության թեկնածու Հ. Սաֆարյանը և ուրիշներ շրջանները դասախոսության մեկնելիս անպայման լինում են ֆերմաներում, խորհուրդներ են տալիս անասնապահության աշխատողներին, անձամբ անց են կացնում կենդանիների սրսկումներ, պրոֆիլակտիկ միջոցառումներ։

Շրջանները մեկնող դասախոսները միաժամանակ մեծ օգնություն են ցույց տալիս Ընկերության շրջանային կազմակերպություններին, գյուղական դասախոսների համար անց են կացնում կոնսուլտացիաներ, սեմինար պարապմունքներ։

Գիտելիքների, և հատկապես գյուղատնտեսական գիտելիքների պրոպագանդման գործում գգալի աշխատանք են կատարում նաև վերջին տարիներին ստեղծված Ընկերության անդամների գյուղական խմբակները։ Այժմ ռեսպուբ-

միկայում կան ավելի քան 180 այդպիսի խմբեր, որոնք ընդգրկում են մոտ 2000 անդամներ։ Գյուղական խմբերի կազմակերպմամբ զգալիորեն ավելացել է գյուղում կարդացվող դասախոսությունների թիվը. կարդացվող դասախոսությունները ավելի սերտորեն են կապվում կոլտնտեսությունների ու սովխոզների առջև դրված կոնկրետ խնդիրներին, քանի որ նրանք կարդացվում են գյուղի պրակտիկ աշխատողների կողմից։

Գիտա-արտադրական կոնֆերանսներ են անցկացվել Ապարանի, Թալինի, Մարտունու, Դիլիջանի, Իջևանի, Բասարգեչարի, Կամոյի, Կարմիրի, Ղափանի, Էջմիածնի և մի շարք այլ շրջանների խոշոր սովխոզներում ու կոլտնտեսություններում, որտեղ հանդես են եկել անվանի շատ գիտնականներ։

Գիտա-արտադրական կոնֆերանսներ են անցկացվում ոչ միայն գյուղատնտեսության, այլև արդյունաբերության աշխատողների համար։ Այսպես, օրինակ, բոլորովին վերջերս Իջևանի ֆաներայի գործարանում, Ընկերության նախաձեռնությամբ, կազմակերպվեց գիտա-արտադրական կոնֆերանս, որին մասնակցում էին շրջանի անտառային արդյունաբերության աշխատողները։ Առաջիկայում նման գիտա-արտադրական կոնֆերանսներ կանցկացվեն նաև Արզնու Ապակե-տարայի գործարանում, Լենինականի Տեքստիլ կոմբինատում, Արթիկ-տուֆի հանքերում և այլ ձեռնարկություններում։

Ընկերության աշխատանքներում զգալի տեղ է գրավում երիտասարդության կոմունիստական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքը։ Հատուկ կարևորություն տալով այդ գործին, Ընկերության վարչության նախագահությունը 1956 թվականի նոյեմբերին ռեսպուբլիկական վարչությանն առընթեր ստեղծեց երիտասարդության շրջանում տարվող բանավոր և գրավոր պրոպագանդայի հանձնաժողով, որի նախագահն է ընտրված ռեսպուբլիկական վարչության նախագահի տեղակալ, պրոֆեսոր Մ. Սանթրոսյանը։

Երիտասարդական հանձնաժողովներ են ստեղծվել նաև Ընկերության Երևանի, Լենինականի, Կիրովականի քաղաքային և մի շարք գյուղական շրջանային բաժանմունքներին առընթեր։ Այդ հանձնաժողովները պլանավորված կարգով ռեսպուբլիկայի երիտասարդության մեջ զգալի աշխատանք են տանում պարտիայի համագումարների, պլենումների որոշումների ու նյութերը մասսայականացնելու, երիտասարդությանը կոմունիստական բարոյականության ոգով դաստիարակելու, նրանց մեջ դեպի արվեստը, գրականությունը, գիտությունը, տեխնիկան սեր զարգացնելու ուղղությամբ։

Երիտասարդության հետ տարվող սիստեմատիկ աշխատանքի լավ օջախներ են հատկապես նրանց համար կազմակերպված լեկտորիումները։ Այդպիսի լեկտորիումներ են կազմակերպվել Հրազդանի, Աշտարակի, Էջմիածնի, Թալինի, Արտաշատի և ռեսպուբլիկայի մի շարք այլ շրջանների երիտասարդության համար։

Ընկերության վարչության նախագահության որոշմամբ, Ընկերության կողմից հրատարակվող յուրաքանչյուր անուն բրոշյուրից ու մեթոդական նամակից 50-ական օրինակ տրվում է ՀԼԿԵՄ Կենտկոմին՝ կոմերիտական դասախոսական խմբերին օգնելու համար։

Միայն 1959 թվականի անցած վեց ամիսների ընթացքում ռեսպուբլիկայի գյուղական շրջանների երիտասարդության համար (առանց քաղաքների) կարդացվել է շուրջ 7500 դասախոսություն։

Երիտասարդությունը մեծ սիրով է մասնակցում նաև հին բոլշևիկների, Սովետական Բանակի գեներալների, Սովետական Միության հերոսների, սոցիալիստական աշխատանքի հերոսների, արտադրության առաջավորների, կոմունիստական աշխատանքի բրիգադաների անդամների, գրականության, արվեստի, գիտության ականավոր գործիչների հետ կազմակերպված հանդիպումներին։

Ընկերության աշխատանքներում զգալի տեղ է հատկացվում գիտա-աթեիստական պրոպագանդային։ Տարեցտարի ավելանում է այդ ուղղությամբ կարդացվող դասախոսությունների քանակը, բարելավվում որակը։ Եթե 1953 թվականին Ընկերության գծով ռեսպուբլիկայում կարդացվել է ընդամենը 176 դասախոսություն, ապա 1958 թվականին դրանց թիվը հասել է 1200-ի, իսկ 1959 թվականի առաջին կիսամյակում կարդացվել է շուրջ 900 դասախոսություն։ Եթե նկատի ունենանք, որ բնական գիտությունների, ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, սովետական արբանյակների մասին կարդացվող դասախոսությունները ևս անպայմանորեն կապվում են գիտական աթեիզմի հարցերի հետ, ապա դրանց թիվը հնգապատկվում է։

Գիտա-աթեիստական պրոպագանդայի գործը հետագայում բարելավելու, այդ ուղղությամբ պրոպագանդիստական կադրեր պատրաստելու նպատակով Երևանում արդեն գործում է գիտա-աթեիստական համալսարան, իսկ Լենինականում և Կիրովականում նրանք կգործեն սեպտեմբերի երկրորդ կեսից։ Գիտա-աթեիստական համալսարաններ կստեղծվեն նաև ռեսպուբլիկայի մի շարք շրջանային կենտրոններում։

Գիտա-աթեիստական պրոպագանդայի ծավալման գործում նոր խթան հանդիսացավ Երև-

վանի Պլանետարիումը Ընկերությանը հանձնելը։ Պլանետարիումի շրջիկ բրիգադան համապատասխան ցուցագրական սարքավորումներով արդեն եղել է ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում, որտեղ բնակչությանը ցուցադրել է տիեզերքի կառուցվածքը և բացատրել նրա գաղտնիքները։

Ընկերության կողմից զգալի աշխատանք է կատարվում ռեսպուբլիկայում բնակվող ազգային փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների, քրդերի համար մայրենի լեզվով դասախոսություններ կարդալու ուղղությամբ։ Այդ նպատակով դասախոսներ են հրավիրվում նաև Ադրբեջանից։

Իր հերթին Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը դասախոսներ է ուղարկում Ադրբեջանական և Վրացական ՍՍՌ-ներում բնակվող հայ ազգաբնակչության առջև դասախոսություններով հանդես գալու համար։

Դասախոսական պրոպագանդայի ծավալմանը զուգընթաց, Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը զգալի աշխատանք է կատարում նաև գրավոր պրոպագանդայի՝ բրոշյուրներ և մեթոդական նամակներ հրատարակելու ուղղությամբ։ Տարեցտարի ընդարձակվում է Ընկերության հրատարակչական գործունեությունը. եթե 1956 թվականին հրատարակվել է 23 անուն բրոշյուր՝ 60 տպագրական մամուլ ծավալով, ապա այն 1958 թվականին հասել է 79 անվանավելի քան 200 տպագրական մամուլ ծավալով, իսկ 1959 թվականի անցած 7 ամիսների ընթացքում հրատարակվել են 45 անուն բրոշյուրներ ու մեթոդական նամակներ։

Ընկերության հրատարակչական գործունեությունը հիմնականում ուղղված է Սովետական իշխանության տարիներին Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի բնագավառներում սովետական ժողովրդի ձեռք բերած հոյակապ նվաճումների պրոպագանդմանը։

Վերջին տարիներին Ընկերության հրատարակչական գործունեության կենտրոնական հարցերից մեկն էլ կազմել է ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունն արտացոլող բրոշյուրների հրատարակումը. դրանցից են Զ. Բաշինջաղյանի՝ «Սովետական Վրաստանի 36 տարին», Ռ. Մանուկյանի և Ռ. Մովսիսյանի՝ «Սովետական Ադրբեջանի 37 տարին» Հ. Սահակյանի՝ «Մեծ Հոկտեմբերը և անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության ամրապնդումը», Ս. Պետրոսյանի և Գ. Խաչատրյանի՝ «ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը Սովետական բազմազգ պետության հզորության հիմքն է», Հ. Դարբինյանի՝ «Ժողովուրդների բարեկամության արտացոլումը հայ կլասիկ գրականության մեջ», Շ. Հարությունյանի՝ «Սովետական Ուկրաինայի 40 տարին», Գ. Սինյակովիչի՝ «Սովետական Բելոռուսիայի 40 տարին» բրոշյուրները և այլն, ըստ որում վերջին բրոշյուրը Ընկերության վարչության պատվերով նախապատրաստել է Բելոռուսական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը։

Որոշակի աշխատանք է կատարված նաև ժողովրդական դեմոկրատիայի երկրների կյանքն արտացոլող բրոշյուրներ հրատարակելու ուղղությամբ։ Բրոշյուրներ են հրատարակվել Չինաստանի, Բուլգարիայի, Կորեայի, Ռումինիայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի մասին, ինչպես նաև «Սոցիալիզմի կառուցումը ժողովրդա-դեմոկրատական երկրներում» թեմայով։

Որոշակի աշխատանք է կատարված նաև նշանավոր մարդկանց կյանքն ու գործունեությունն արտացոլող մի շարք բրոշյուրներ հրատարակելու ուղղությամբ, որոնք մեծ նշանակություն ունեն երիտասարդության դաստիարակության համար։ Հրատարակվել է «Ինչպես էր աշխատում Վ. Ի. Լենինը» բրոշյուրը, բրոշյուրներ են հրատարակվել Դ. Մ. Դիմիտրովի, Սա. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ալ. Մյասնիկյանի, Կամոյի, Մ. Գորկու, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի, Սիրանույշի, Ալ. Թամանյանի, Թ. Թորամանյանի, Սեչենովի, Պավլովի, Լեոնարդո դա Վինչիի, Ի. Ֆրանկոյի մասին և այլն։

Ընկերության վարչության ուշադրության կենտրոնում է եղել նաև երիտասարդության մեջ տարվող գրավոր պրոպագանդան։ Երիտասարդության համար հրատարակվել են այնպիսի բրոշյուրներ, ինչպիսիք են, օրինակ, Ա. Ադոյանի՝ «Սիրո և ընտանիքի մասին», Ե. Շացի՝ «Լենինյան կոմերիտմիության մարտական սրբազան գործունեությունները Հայրենական Մեծ պատերազմում», Կ. Ուդումյանի՝ «Լենինյան կոմերիտմիության մարտական ուղին», Հ. Ավետիսյանի՝ «Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիզմի համար մղված պայքարում», Պ. Սաֆյանի և Ս. Սաղաթելյանի՝ «Ինչ տվեց Սովետական իշխանությունը երիտասարդությանը» և այլն։

Զգալի աշխատանք է կատարվել նաև երիտասարդության մեջ ֆիզիկական կուլտուրայի հարցերը պրոպագանդելու ուղղությամբ։ Հայկական ՍՍՌ Սպորտային ընկերությունների և կազմակերպությունների միության և նրա գիտա-մեթոդական խորհրդի հետ համատեղ, ավելի քան 40 հազար տպաքանակով հրատարակվել ու տեղերն են ուղարկվել 28 անուն բրոշյուրներ և սպորտի տարբեր ձևերից անց-

կացվող մրցումների կանոններ ու մեթոդական նամակներ։

Ընկերության հրատարակչական գործունեության մեջ նորություն է «Օգնություն դասախոսին» մեթոդական նամակների սերիայի հրատարակումը. դրանք 10—15 էջից բաղկացած դասախոսության թեզիսներ են, որոնց նպատակն է արագ կերպով դասախոսներին ուղղություն և համառոտ նյութ տալ հանդես գալու այն առօրյա հրատապ խնդիրների մասին, որոնք առաջացրում է կյանքը։ Այդ սերիայով թեզիսներ են հրատարակվել ոռեիդոնիզմի մասին, ՀամԼԿԵՄ 40-ամյակի առթիվ, ՍՄԿՊ XXI համագումարի մի շարք տեսական հարցերի, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի խնդիրների մասին և այլն։ Ընկերության խնդիրն է ավելի լայն տեղ տալ այս սերիայով հրատարակվող մեթոդական նյութերին։

Ընկերության 1959 թվականի հրատարակչական գործունեությունը հիմնականում ուղղված է ՍՄԿՊ XXI համագումարի որոշումների ու նյութերի, ինչպես նաև ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի խնդիրների մասսայականացմանը։ 1959 թվականի անցած յոթ ամիսների ընթացքում այդ թեմաներով հրատարակվել են 15 անուն բրոշյուրներ ու մեթոդական նամակներ։ Դրանցից են Ս. Ստեփանյանի «Պրոլետարական ինտերնացիոնալիզմը սոցիալիստական երկրների փոխհարաբերությունների հիմքն է», Լ. Սարդարյանի «Երկու սիստեմների խաղաղ գոյակցության հարցի շուրջը», Խ. Հովակիմյանի «Կոմունիզմ կառուցողների համագումարը», Ռ. Մանուկյանի «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի միջազգային նշանակությունը», Ա. Կիրակոսյանի «Հայկական ՍՍՌ արդյունաբերության զարգացումը 1959—1965 թվականներին» բրոշյուրները, Լ. Բիշարյանի «Այգեգործության և պտղաբուծության զարգացումը Հայաստանում 1959—1965 թվականներին», Ն. Թուխիկյանի «Կոմունալ-բնակարանային շինարարությունը Հայկական ՍՍՌ-ում 1959—1965 թվականներին», Հ. Հովակիմյանի «Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացումը 1959—1965 թվականներին» դասախոսության թեզիսները և այլն։ Վերջերս հրատարակված Ա. Առաքելյանի «Յոթնամյակը խոշոր քայլ է ՍՍՌՄ տեխնիկական պրոգրեսում» բրոշյուրը և Շ. Մարգարյանի «Մասնագիտացումն ու կոոպերացումը Հայկական ՍՍՌ մեքենաշինության մեջ» դասախոսության թեզիսները հանդիսացան ՍՄԿՊ Կենտկոմի Հունիսյան պլենումի որոշումների պրոպագանդման ուղղակի արձագանքը։

1959 թվականին բրոշյուրներ են հրատարակվել նաև սովետական պետական կարգապահության ամրապնդման, հակահասարակական ու պարազիտային տարրերի դեմ մղվող պայքարի, երեխաների ընտանեկան դաստիարակության, կուլտուրականության ու բարեկիրթ վարվեցողության, բժշկական, գիտա-աթեիստական, բնագիտական և այլ թեմաներով։ ՍՍՌՄ ժողովուրդների երկրորդ սպարտակիադայի առթիվ հրատարակվել է համապատասխան բրոշյուր և մի քանի մեթոդական նամակ։

Բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Ճաղարյանը հանդես է եկել «Սրտի վիրաբուժության նվաճումները», ինժեներ Յա. Շերմազանյանը՝ «Արեգակնային էներգիայի օգտագործումը ժողովրդական տնտեսության մեջ», Ս. Գինոսյանը և Տ. Մարգարյանը՝ «Քրիստոնեական մի քանի տոների և ծիսակատարությունների մասին» բրոշյուրներով և այլն և այլն։

Եղբայրական Վրաստանում և Ադրբեջանում ապրող հայ բնակչության մեջ քաղաքական և գիտական գիտելիքների պրոպագանդայի ծավալմանը օգնելու նպատակով, արդեն մի քանի տարի է, ինչ Հայկական ՍՍՌ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը կանոնավոր կերպով Վրաստանի և Ադրբեջանի Ընկերությունների ռեսպուբլիկական վարչություններին, ինչպես նաև Ախալքալակի շրջան և Լեռնային Ղարաբաղի մարզ ու Օրդուբադի շրջան է ուղարկում Ընկերության հրատարակած բրոշյուրները։

Ընկերության աշխատանքներում գնալով ավելի լայն ծավալ ու նշանակություն է ստանում բնակչության մեջ տարվող քաղաքական և գիտական գիտելիքների ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր պրոպագանդան։

Ընկերության վարչության, նրան կից սեկցիաների, շրջանային բաժանմունքների, Ընկերության բոլոր անդամների պատվի գործն է անընդհատ բարձրացնել կարդացվող դասախոսությունների և հրապարակվող բրոշյուրների գաղափարական ու գիտական մակարդակը, ավելի լայնորեն արտացոլել մեր բազմահարուստ կյանքի բոլոր բնագավառները։

Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ